

Սկզբնաղբյուր՝ <http://www.armworld.am/detail.php?paperid=5445&pageid=165143&lang=>

Մինչ հայրենի քաղաքական ուժերը հույժ կոնֆիդենցիալ բանակցություններ են վարում ապագա դաշինքների հնարավոր եւ նույնիսկ անհնար ձեւաչափերի շուրջ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը լուրջ գործով է զբաղված՝ նախապատրաստում է Ընտրական օրենսգրքը կյանքի կոչելու համար անհրաժեշտ գործիքակազմը:

Երեկ, ամփոփելով ԿԸՀ հերթական նիստում ընդունված որոշումները՝ ԿԸՀ նախագահ ՏԻԳՐԱՆ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԸ ներկայացրեց առաջիկա խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը, նաեւ պատասխանեց մեզ հետաքրքրող հարցերին:

-Ընտրական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ԿԸՀ-ը պետք է ընդուներ բազմաթիվ կարգեր, կանոնակարգեր, ձեւաթղթեր, ձեւանմուշներ եւ այլն: Ընդհանուր առմամբ, խոսքը ավելի քան 5 տասնյակ փաստաթղթերի մասին է: Այսինքն՝ մոտ 5 տասնյակ որոշումներ պետք է ընդունվեին ԿԸՀ-ի կողմից, որպեսզի ԸՕ-ով նախատեսված իրավահարաբերությունները ստանային լիակատար կանոնակարգում:

Այդ որոշումների մի մասը կայացվել էր ԸՕ ընդունումից անմիջապես հետո, կային որոշումներ, որոնք լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեին՝ նաեւ ԸՕ-ում տեղի ունեցած փոփոխությունների հետ կապված, եւ սա, ըստ էության, այդ աշխատանքի շարունակությունն է: Այսօրվա նիստի օրակարգում ընդգրկված 12 որոշումներն ընդունելուց հետո կարող ենք ասել, որ որոշումների ընդհանուր ծավալի 85-90 տոկոսն արդեն ընդունված է:

-Ընտրացուցակների հրապարակման դրույթն ընդունվեց՝ ի հեճուկս Վենետիկի հանձնաժողովի մտավախության, թե դրանով խախտվում է քվեարկության գաղտնիության սկզբունքը: ԸՕ փոփոխություններից հետո վենետիկցիների կողմից դրա հետ կապված որեւէ լուրջ առարկություն եղե՞լ է:

-Այսպես ասեմ՝ այդ խնդիրը հիմա մեր կանոնակարգման տիրույթից դուրս է: Ես, որպես իրավաբան, իմ կարծիքը հայտնել եմ, բայց դա ընդամենը իմ կարծիքն է, որն այս պարագայում որեւէ նշանակություն չունի: Կա ընդունված օրենք, որը պետք է լիարժեք ծավալով կյանքի կոչել, եւ ինչպիսին էլ լինեն այդ կանոնակարգումները՝ նույն կերպ կյանքի են կոչվելու:

-Ընդդիմադիրները պնդում են, թե սուտ հայտարարության համար քրեական պատասխանատվություն սահմանող դրույթը զրոյացնում է ընտրությունների թափանցիկության բոլոր երաշխիքները, որ տալիս էր ընտրացուցակների հրապարակումը: Մարդիկ պարզապես չեն ցանկանա ռիսկի դիմել՝ իմանալով, որ սխալվելու դեպքում կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել:

-Այս դեպքում էլ նույնը պիտի ասեմ. այդ դրույթն արդեն իսկ ամրագրված է օրենքում եւ ուրեմն պետք է կյանքի կոչվի:

Երկրորդ՝ այդ կանոնակարգման գերնպատակը եղել է այն, որ կանխվի կեղծ դիմումներ ներկայացնելու հնարավորությունը: Եվ եթե մարդու տված տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, նա ո՛չ որեւէ բանից վախենալու խնդիր ունի, ո՛չ պատճառ:

-Ձեզ հայտնի՞ է՝ ինչ հանգրվանում են տեղամասերում ընտրական ողջ գործընթացի տեսանկարահանման եւ առցանց հեռարձակման կազմակերպման եւ ֆինանսավորման շուրջ միջազգային կառույցների հետ վարվող բանակցությունները:

-Տեղյակ չեմ: Գիտեմ, որ հանձնաժողով է ձեւավորվել, եւ այդ շրջանակներում աշխատանք է տարվում: Մնացած մանրամասներին տեղյակ չեմ:

-Ի՞նչ էք կարծում՝ կտեղավորվե՞նք ժամկետների մեջ:

-Դե, դա արդեն մրցույթին մասնակցող կազմակերպությունների խնդիրն է՝ իրենք պետք է գնահատեն իրենց հնարավորությունները՝ առկա ռեսուրսները, ժամանակը եւ աշխատանքի ծավալը:

-Նկատի ունենալով ԸՕ-ում տեղի ունեցած սկզբունքային փոփոխությունները եւ տեխնիկական նորամուծությունները, որոնց իրացումը նույնպես ծախսերի հետ է կապված, կարո՞ղ ենք ասել, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունները կլինեն ամենաձախաստար ընտրությունները մեր նորօրյա պատմության մեջ:

-Իհարկե, այս ընտրություններն էականորեն տարբերվելու են նախորդներից՝ գործելու են մի շարք նոր մեխանիզմներ, մասնավորապես յուրաքանչյուր կուսակցության համար պետք է տպվի առանձին քվեաթերթիկ, որպես նորույթ ներդրվում է ինքնասուսնավող դրոշմանիշերի մեխանիզմը, այդ դրոշմանիշերը պետք է պատրաստվեն եւ տրամադրվեն ընտրական տեղամասերին, քվեարկության ծրարներն ունենալու են առանձնահատուկ ձեւ:

Բացի դրանից, տեղամասային կենտրոններում տեղադրվելու են տեխնիկական սարքավորումներ, որոնք սպասարկվելու են առանձին մասնագետների կողմից, նրանք այդ օրվա աշխատանքի համար պետք է վարձատրվեն, եւ այլն, եւ այլն: Այս ամենը միանշանակ վկայում է, որ այս ընտրությունները նախորդներից անհամեմատ ավելի թանկ կլինեն:

-«Համախմբում» կուսակցության նախագահ Վարդան Օսկանյանը օրերս հեռուստաընկերություններից մեկին տված հարցազրույցում ասաց, որ Գյումրիի մոտ 70 տեղամասերի արդյունքներով իր կուսակցությունը 7-8 տոկոս ձայն էր հավաքել, բայց վերջին 10 տեղամասերից ստացված տվյալներն ամբողջությամբ փոխել են քվեարկության պատկերը՝ իրենց քվեները միանգամից 3-4 տոկոսով իջել են, այն բանից հետո, երբ տվյալների հրապարակումը մեկ-մեկուկես ժամ ընդհատվել է: Նման բան եղե՞լ է:

-Տեղամասային բոլոր կենտրոններում եղել են բազմաթիվ վստահված անձինք, կուսակցությունների ներկայացուցիչներ, որոնք մինչեւ վերջին պահը հետեւել են արդյունքների ամփոփման, տեղամասային կենտրոնների փակման, ընտրական փաստաթղթերի պարկերը տեղամասային կենտրոններից ընտրատարածքային

հանձնաժողովներ տեղափոխելու գործընթացին: Այսինքն՝ ընտրական ողջ գործընթացի նկատմամբ լիակատար հրապարակայնություն է ապահովվել, եւ եթե գեթ մեկ տեղամասում նման խնդիր արձանագրված լիներ, միանշանակ որեւէ սուբյեկտի կողմից կներկայացվեր համապատասխան դիմում համապատասխան ԸԸՀ-ին:

Նման պայմաններում, եթե չեմ սխալվում, նշված կուսակցության կողմից եզակի թվով վերահաշվարկի դիմումներ են ստացվել: Այնպես որ, սկզբունքորեն բացառում եմ, որ որեւէ տեղամասում տեղի ունենար այն երեւոյթը, որի մասին խոսում է պրն Օսկանյանը: